ռուստ վայրի կենդանիներով։ Այդտեղ լեռներում արածում էին բազմաթիվ կխտարներ՝ *այծեմնիկներ, եղնիկներ, հաճախ պատահում էին եղջերուների խոշոր նախիրներ՝* յէղոր, *որոնք՝* բուդայէղոր. *քարոշխարների և քարայծերի հոտեր, անտառների մեջ արջը, աղվեսն ու դալան՝ կզաքիսը, վայրի հավքերից՝* միրհավը[58], *մոշահավը, փասյանը, քարքարոտ վայրերում՝ կաքավը։*

Հին գերեզմանաքարերի վրա հաճախ պատահում ենք որսորդության տեսարանների— որսորդն աղեղը լայն բացած՝ ընկած է եղջերվի կամ քարայծի, երբեմն վագրի ետևից[59] *կամ բազեն ձեռքին՝ դուրս է եկել որսի՝ նույնիսկ բազեն արդեն թռել է և ահա՜ հասնում է որսին։ Այդ տեսարաններին հանդիպում ենք ոչ միայն ազնվականների, այլև հասարակ գյուղացիների գերեզմանաքարերի վրա։ Որսը որոշ չափով լրացնում էր մսեղենի պակասը։ Դալայի, նապաստակի կամ աղվեսի մորթը հարկավոր էր կանանց և տղամարդկանց* ֆուլֆէրը *զարդարելու համար։ Այս պահանջը մինչև վերջին ժամանակները կար, քանի որ ամեն կին ձգտում էր ունենալ* ֆուլֆ։ *Վերջին ժամանակները որսի կենդանիները քչացել էին։ Փասյանն այլևս չէր երևում, յէղոր արդեն սակավ էր պատահում և միայն սովետական իշխանության օրոք միջոցներ ձեռք առնվեցին որսի կենդանիների ոչնչացնելու դեմ։ Կաքավն էլ նկատելի չափով պակասել էր։ Որսորդությունը գյուղացու համար դարձել էր մինչև սովետական կարգեր հաստատվելը բոլորովին երկրորդական զբաղմունք և նրա տարեկան բյուջեն շատ քիչ լրացնող աղբյուր։ Սակայն բեկերն ու այլ ազնվականները դեռ հեղափոխության նախօրյակին պարծենում էին իրենց* թազի՝ *բարակ շներով, և* ձէռնաղուշավ՝ *վարժված բազեներով։*

Որսորդը եթե կամենում էր հաջողություն ունենալ և որևէ փորձանքի չպատահել, պիտի որսի դուրս գար բոլորովին մաֆուր։ *Այսպես՝ նա պիտի նախորդ գիշերը հրաժարվեր ամուսնական հարաբերություններից*[60], *ոչ մի վատ բան արած չլիներ, չար աչքով ոչնչին և ոչ մեկին նայած չլիներ։* Ծննդկան կնոջն արգելվում էր *հրացանին ձեռք տալ, հակառակ դեպքում որսկանի գնդակը նշանին չէր դիպչի։ Նրան* արգելվում էր *նույնպես որսի միս ուտելը։*

Որսի էին գնում մենակ կամ ընկերությամբ։ Զենքն ամեն տան մեջ կար ոչ միայն ավազակներից պաշտպանվելու, այլև որսորդության համար։ Որսի գնալիս որսորդը չպիտի պատահողի հետ խոսեր, ինչպես և որսի ժամանակ չպիտի խոսեր և վեճի բռնվեր ընկերոջ հետ, չպիտի ընկերոջ անունը տար։ Այս պահանջը բացատրվում է ոչ միայն նրանով, որ որսի ժամանակ անհրաժեշտ էր լուռ մնալ որսը չփախցնելու համար, այլև այն երկյուղով՝ չլինի՞ թե կենդանիներին պաշտպանող ոգիները[61] *իմանան որսորդի մոտենալը և նրանց նախազգուշացնեն և չլինի՞ թե, ընկերոջ անունն իմանալով՝ այդ ոգիները վերջը նրանից վրեժխնդիր լինեն։*

Մեղք էր սպանել տակը հորթ ունեցող յէղնիկին *կամ* կխտարին[62]։ *Եթե որս-*

---

58 *Ցախաքլոր, անտառաքլոր, մորեկ. ռուս.*—тетерев.

59 *Վագրն անշուշտ հաճախ էր մտնում այս գավառը Իրանի տափաստաններից։*

60 *Թեխ։*

61 *Զանգեզուրում էլ, ինչպես Կովկասի լեռնաբնակ ժողովուրդների մեջ կար այն հավատը, որ վայրի կենդանիներն ունեն իրենց* պաշտպան ոգիներ։

62 Д. Маргиани, Сванеты, СМОМПК, вып. X, отд. I, *էջ 70—71։* Cervus capreolus.